ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«14»«հունվարի» 2026թ. ՄՈՐՈՇՈՒՄ/576 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N ՄՈ / 128- Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշման N 9.1 հավելվածը,Հայաստանի Հանրապետության մարզերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում « 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչներին օժանդակության ծրագիր» ծրագրի շահառու ուսուցիչներին լրավճարի տրամադրումն իրականացնելու նպատակով՝

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2026 թվականի մարտի 10-ի «Գումար հատկացնելու մասին» N ՄՈ/128-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

0901 ք. Արմավիր, Աբովյան -71 Հեռ.՝ 060901010, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am, armavir.qartughar@gmail.com,

1) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «1. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին « 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչներին օժանդակության ծրագիր» ծրագրի շրջանակներում տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված 26 028 000 (քսանվեց միլիոն քսանութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 5 551 630 (հինգ միլիոն հինգ հարյուր հիսունմեկ հազար վեց հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը վերաբաշխել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայության թվով 17 (տասնյոթ) հանրակրթական դպրոցներին՝ համաձայն հավելվածի: »
2) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի
3) որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ՝ «2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստի պարտականությունները կատարող Ա. Հակոբյանին՝ նախկինում կնքված պայմանագրերում կատարել համապատասխան փոփոխություններ : »

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

0901 ք. Արմավիր, Աբովյան -71 Հեռ.՝ 060901010, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am, armavir.qartughar@gmail.com,

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզպետի
2026 թվականի մարտի 10-ի
N ՄՂ / 128 - Ա որոշման

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզպետի
2026 թվականի հոկտեմբեր 14 -ի
N ՄՈ/ 576 - Ա որոշման

ՑԱՆԿ

ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայության հանրակրթական դպրոցներին « 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչներին օժանդակության ծրագիր» ծրագրի շրջանակներում 2026թ-ի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով տրամադրված գումարի վերաբաշխման

պ /h	*Դպրոցի անվանումը*	*ՀՀ դրամ*
1	2	3
6	Արմավիրի N 9 հիմնական դպրոց	862600
17	Արտաշարի միջնակարգ դպրոց	341130
29	Հացիկի միջնակարգ դպրոց	480000
36	Նորավանի միջնակարգ դպրոց	142460
48	Վաղարշապատի ***Հ.Հովհաննիսյանի անվ. N 3*** հիմնական դպրոց	416930
52	Վաղարշապատի Ռ.Պատկանյանի անվ. N 9 հիմնական դպրոց	287540
53	Վաղարշապատի Վ.Ռշտունու անվ. N 11 հիմնական դպրոց	528000
59	Ամբերդի Հ.Նավասարդյանի անվ. միջնակարգ դպրոց	453330
60	Այգեկի Մ. Մովսիսյանի անվ. միջնակարգ դպրոց	415330

64	Արագածի միջնակարգ դպրոց	305460
66	Արշալույսի Ս.Գրիգորյանի անվ. միջնակարգ դպրոց	281000
67	Արտիմետի միջնակարգ դպրոց	307140
68	Արևաշատի միջնակարգ դպրոց	414320
72	Գրիբոյեդովի Վ.Ռոստոմյանի անվ. միջնակարգ դպրոց	237870
83	Հովտամեջի միջնակարգ դպրոց	228230
88	Նորակերտի միջնակարգ դպրոց	204470
98	Արտամետի Գ. Մարգարյանի անվ. միջնակարգ դպրոց	422160

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Գ.ԳԱԼՍՏՅԱՆ